

Սիրելի Ծխականներ,

Վերջացող տարուան ընթացքին ունեցած եմ հետեւեալ գործունէութիւնը: Կիրակի եւ տօնական օրերուն կատարած եմ առաւօտեան ժամերգութիւն եւ մատուցած Ս Պատարագ եւ խօսած աւուր պատշաճի քարոզ Հայերէն ու Անգլերէն լեզուներով, ի շիջութիւն մեր բարեպաշտ ժողովուրդին:

Վերոյիշեալներու կարգին այցելած եմ հիւանդներուն եւ սգաւորներուն ու կատարած տնօրհնէք ու գերեզմանօրհնէք:

Նախագահած եմ եկեղեցիի յարակից կազմակերպութիւններու ժողովներուն եւ տնօրինած պարտն ու պատշաճը:

Մեր ծխականներէն ոմանց հետ կառավարական գրասենեակները գացած եմ իրենց գործերը կարգադրելու համար:

Ունեցած ենք հետեւեալ խորհրդակատարութիւնները:

Մկրտութիւն եւ դրոշմ 1, Պսակ 2:

Փետրուար 26 ին մեր եկեղեցիի ներկայացուցիչներուն հետ ներկայ եղայ Սիւ-Պրիթընի Եկեղեցիներու Խորհրդաժողովի սարքած ճաշկերոյթին:

Մարտ 22 ին դիմաւորեցինք Առաջնորդ Սրբազան Հայրը: Նոյն Երեկոյ Սրբազանը ընթրիքէն վերջ ժողով մը ունեցաւ ծուխիս կազմակերպութիւններուն հետ:

Սրբազանը Ծաղկազարդի Կիրակին պատարագեց, քարոզեց եւ նախագահեց եկեղեցիի օծման 34րդ. տարեդարձի հանդիսութեանց եւ իրիկունը վերադարձաւ Նիւ-Եորք:

Եղեռնի 60րդ. տարեդարձին առթիւ, Ապրիլ 24ի Երեկոյին մատուցինք Ս Պատարագ, որուն ներկայ եղան օտար եկեղեցականներ ալ:

Ապրիլ 30 էն Մայիս 3 մասնակսեցայ Եկեղեցականներու Համագումարին եւ Թեմական Պատգամաւորական ժողովին, ի Քէմպրիճ, Մէս:

Նոյեմբեր 7ին ծուխիս Երեսփոխաննորուն հետ մասնակսեցանք Առաջնորդարանի կազմակերպած Երջանային ժողովին:

Նոյեմբեր 15 ին Ծխական Խորհուրդի ատենապետին հետ ներկայ եղանք Հարտմըրտի Ս Գէորգ Եկեղեցիի տարեկան ճաշկերոյթին:

Օգոստոս ամսու մէջ երկու շաբաթ արձակուրդ ունեցայ:

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին հայ ազգին հոգեւոր մայրն է:

Աղօթենք որ Աստուած մեզի շնորհէ երկնային իմաստութիւն եւ նուիրում, ծառայելու համար Իր փառքին եւ մեր սիրելի եկեղեցիին:

Սրբազան Հայրը
Սրբազան ԲՏՆՅ. Տ Աստուրեան
Հոգեւոր Հովիւ